**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» վարկային համաձայնագիր

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 08.04.2015թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 21.09.2015թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 52.0 մլն ԱՄՆ դոլար (ըստ վարկային համաձայնագրի փոփոխություն № 1-ի՝ (2017թ. հունիսի 16) 50.5 մլն ԱՄՆ դոլար, ըստ փոփոխություն № 3-ի՝ (2019թ. դեկտեմբերի 24) 39.86 մլն ԱՄՆ դոլար)
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 31.12.2023թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.11.2029թ.-15.11.2039թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիր

**Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝** Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիր
**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 11.08.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 11.08.2015թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված գումարը՝** 21,794,486.0 ԱՄՆ դոլար (ըստ ենթավարկային համաձայնագիր № 2-ի՝ (2019թ. նոյեմբերի 19) 28,194,486.0 ԱՄՆ դոլար, ըստ ենթավարկային համաձայնագիր № 3-ի՝ (2020թ. փետրվարի 14) 23,194,486.0 ԱՄՆ դոլար)
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 31.12.2023թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 15.11.2029թ. - 15.11.2039թ.

**Ծրագրի նպատակը՝** Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում վերակառուցվում է 30 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող

«Աշնակ» 220 կՎ ենթակայանը, ինչպես նաև 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող 220/110/6 կՎ «Արարատ-2» ենթակայանը:

**Ակնկալվող արդյունքները՝** Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի անվտանգությունը և աշխատանքի հուսալիությունը:

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** «Decon international GmbH/ Consulectra Unternemensberatung GmbH»
**Պայմանագրի անվանումը՝** «Աշնակ» ենթակայանի վերակառուցման իրականացման օժանդակության և վերակառուցման վերահսկողության խորհրդատվական ծառայություն», № ETNIP-CS-1_2015
**Պայմանագրի գումարը՝ 415,962.48** եվրո՝ ներառյալ ոչ ռեզիդենտի շահութահարկը
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 08.12.2016թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 08.12.2016թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
08.12.2016թ. - 31.03.2022թ.

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** «Արամ Կարապետյան» անհատ ձեռնարկատեր
**Պայմանագրի անվանումը՝** 220 կՎ «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման վերահսկողություն № ETNIP-SSS-1-2021
**Պայմանագրի գումարը՝** 27,629,211.11 ՀՀ դրամ
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 28.07.2021թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 29.09.2021թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
29.09.2021թ. - 29.05.2024թ.

**Ծրագրի կապալառուի անվանումը՝** Xian Electric Engineering Co. Ltd
**Պայմանագրի անվանումը՝** «Աշնակ» 220 կՎ ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում» № ETNIP_HVEN_ICB_1/2015
**Պայմանագրի գումարը՝** 9,824,571.4 ԱՄՆ դոլար
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 01.07.2016թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 13.09.2016թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
13.09.2016թ. - 31.03.2019թ.

**Ծրագրի կապալառուի անվանումը՝** Kaskad-Energo LLC
**Պայմանագրի անվանումը՝** «220կՎ «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման» № HVEN-DSI-1/2020_1
**Պայմանագրի գումարը՝** 13,138,984.8 ԱՄՆ դոլար
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 15.09.2021թ.

**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 29.09.2021թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
29.09.2021թ. - 29.05.2024թ.

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 31.12.2022թ. դրությամբ՝**

Xian Electric Engineering Co. ընկերության կողմից մատակարարված սարքեր և սարքավորումներ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 5,406,555.2 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,351,638.8 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 6,758,194.0 ԱՄՆ դոլար*

Xian Electric Engineering Co. ընկերության կողմից իրականացված շինմոնտաժային աշխատանքներ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 3,406,606.5 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 851,651.6 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 4,258,258.1 ԱՄՆ դոլար*

Խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 412,707.3 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 103,176.9 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 515,884.2 ԱՄՆ դոլար*

Այլ ծախսեր

- *Վարկային միջոցների հաշվին - 105,766.2 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 12,819.9 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 118,586.1 ԱՄՆ դոլար*

Ընդհանուր կատարված աշխատանքները, այդ թվում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 9,331,635.2 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 2,319,287.2 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 11,650,922.4 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 31.12.2022թ. դրությամբ՝**

Xian Electric Engineering Co. ընկերության կողմից մատակարարված սարքեր և սարքավորումների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 4,498,625.0 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,106,664.4 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 5,605,289.4 ԱՄՆ դոլար*

Xian Electric Engineering Co. ընկերության կողմից իրականացված շինմոնտաժային աշխատանքների դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 3,197,459.5 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 809,356.2 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 4,006,815.7 ԱՄՆ դոլար*

Kaskad-Energo LLC ընկերությանը վճարված կանխավճար

- *Վարկային միջոցների հաշվին - 2,627,796.9 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 660,225.2 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը – 3,288,022.1 ԱՄՆ դոլար*

Խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց՝

- *Վարկային միջոցների հաշվին - 409,055.4 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 102,416.3 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 511,471.7 ԱՄՆ դոլար*

Այլ ծախսեր

- *Վարկային միջոցների հաշվին - 105,997.9 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 12,866.4 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 118,864.3 ԱՄՆ դոլար*

**Ընդհանուր կատարված վճարումները, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 10,838,934.7 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 2,691,528.5 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 13,530,463.2 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝** 2016 թվականի հուլիսի 1-ին կնքված «Աշնակ» 220 կՎ ենթակայանի վերակառուցման նախագծում, մատակարարում և տեղակայում» № ETNIP_HVEN_ICB_1/2015 պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ Պայմանագիր) 220 կՎ «Աշնակ» ենթակայանի վերակառուցման աշխատանքների կատարման ժամկետի ավարտ է սահմանվել 2019թ. մարտի 31-ը: Ավարտված շինարարական օբյեկտի՝ հաստատված նախագծային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության հավաստման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) գլխավոր տնօրենի հրամանով ստեղծվել է ընդունող հանձնաժողով, որն իրականացրել է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտի ստորագրման գործընթաց: 2021թ. հունիսի 2-ին ստորագրվել է շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտ:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների ժամկետի ուշացմամբ պայմանավորված՝ «Xian Electric Engineering Co. Ltd» ընկերության նկատմամբ,

համաձայն Պայմանագրի 26.2 կետի, հաշվարկվել է տույժ Պայմանագրի գնի 10%-ի՝ 982,457.1 ԱՄՆ դոլար գումարի չափով:
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կողմից 2022թ. դեկտեմբերի 15-ին ավարտման սերտիֆիկատի դիմաց վճարման ենթակա գումարից նվազեցվել է հաշվարկված տույժը, և միակողմանի ստորագրվել է ավարտման սերտիֆիկատի դիմաց վճարման պահանջագիր:
Կառավարման խորհուրդը 2021թ. հուլիսի 23-ի N 3-06-07-21 որոշմամբ հաստատել է «Արարատ-2» ենթակայանի կապալառուի ընտրության մրցույթի արդյունքը՝ հաղթող ճանաչելով «Կասկադ Էներգո» ՍՊ ընկերությանը: Պատվիրատուի և «Կասկադ Էներգո» ՍՊ ընկերության միջև 2021թ. սեպտեմբերի 15-ին ստորագրվել է 220 կՎ «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագիր № HVEN-DSI-1/2020_1-ը, որն ուժի մեջ է մտել 2021թ. սեպտեմբերի 29-ին՝ կանխավճարի վճարման պահից: 2022թ. մայիսի 30-ին Կապալառուն ստացել է շինարարության թույլտվություն և սկսվել են վերակառուցման աշխատանքները:
Ենթակայանի վերակառուցման շրջանակներում ներկայումս իրականացվում են նախագծային աշխատանքներ:
«Արարատ-2» ենթակայանի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: